ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ
Գետարգել համայնք, հեռ .6-14-88,getargel-gt@ mail.ru

24.08.2015թ.
№ 71

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Ձեզ է ներկայացվում 01.01.2014թ-01.12.2014թ ժամանակահատվածում Գետարգել համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝Գ. Ազիզյան

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԳԵՏԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔ

01.01.2014թ.- 01.12.2014թ համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԵՏԱՐԳԵԼ 2014թ.

Հարգելի Գետարգելցիներ 2014 թվականի հաշվետու ժամանակշրջանում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները

➢ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում 01.12.2014 թ.-ի դրությամբ հավաքագրվել են 4970,8 հազ. դրամ եկամուտներ, որը կազմում է 2014 թվականի հաստատված բյուջեի եկամուտների 75.4 տոկոսը:

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսերը կազմել են 13323,9 հազ. դրամ, որը բյուջեով նախատեսածի 79.7 տոկոսն է:

Պետությունից ստացված դոտացիան կազմել է 9162,9 հազ. դրամ:

➢ ԱՇԽԱՏԱՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 430.0 հազ. դրամ սոց. օգնություն: 100.0 հազ. դրամ հատկացվել է Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի մասնակիցներին:

➢ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մշտապես համայնքի ուշադրության կենտրոնում են եղել երիտասարդության խնդիրները՝ կրթության, սպորտի և մշակույթի բնագավառներում: 491.0 հազ. դրամ տրամադրվել է անհատույց օգնություն ուսանողներին ուսման վարձի դիմաց:

- ԲՆՈՒԹՅԱՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կատարվել են ներհամայնքային ճանապարհների փոսալցման աշխատանքներ, սելավատարի մաքրման և զրոսայգու մաքրման և կանաչապատման և նորացվել են գյուղը սնուցող էլ. լարերը:

- ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի և հանրային սննդի ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 3 թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

- ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ.-ին կայացել են Գետարգել համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում հողի օտարումից եկամուտները կազմել են 9434,4 հազ. դրամ: